


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ
բաժնետիրական ընկերության տնօրենների
խորհրդի 02/08/2019 թիվ 1 որոշմամբ

Փոփոխված է

«ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ
բաժնետիրական ընկերության տնօրենների
խորհրդի 01/10/2021թ թիվ 1 որոշմամբ

«ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ
բաժնետիրական ընկերության տնօրենների
խորհրդի 27/01/2025թ թիվ 01 որոշմամբ
Տնօրենների խորհրդի նախագահ
Արտյոմ Նազարյան



ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ՝

Մարտին Գալստյան

GENERAL
ASSET MANAGEMENT

**«ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ
ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐ
(նոր խմբագրություն)**

2025թ.

Բովանդակություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
ԳԼՈՒԽ I. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
ԳԼՈՒԽ II. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	6
ԳԼՈՒԽ III. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	6
ԳԼՈՒԽ IV. ՓԱՅԵՐԸ, ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	14
ԳԼՈՒԽ V. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	16
ԳԼՈՒԽ VI. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ	18
ԳԼՈՒԽ VII. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ	25
ԳԼՈՒԽ VIII. ՓԱՅԵՐԻ ՀԵՏԳՆՈՒՄԸ (ՄԱՐՈՒՄԸ) ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ	25
ԳԼՈՒԽ IX. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ	27
ԳԼՈՒԽ X. ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ	29
ԳԼՈՒԽ XI. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	30
ԳԼՈՒԽ XII. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՈՒՄԸ	31
ԳԼՈՒԽ XIII. ՊԱՏՎԻՐԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ	32
ԳԼՈՒԽ XIV. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ	34
ԳԼՈՒԽ XV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ	36
ԳԼՈՒԽ XVI. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	36
ԳԼՈՒԽ XVII. ՖՈՆԴԻ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ	36
ԳԼՈՒԽ XVIII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	37
ԳԼՈՒԽ XIX. ՊԱՀԱՌՈՒԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	38

ԳԼՈՒԽ XX. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ	38
ԳԼՈՒԽ XXI. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ	39

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն փաստաթուղթը սահմանում է «Ջեներալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության պահպանողական կենսաթոշակային ֆոնդի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) և միաժամանակ հանդիսանում պայմանագիր ֆոնդի մասնակիցների և կառավարչի միջև:

Կանոնները սահմանում են «Ջեներալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության պահպանողական կենսաթոշակային ֆոնդի (այսուհետ՝ Ֆոնդ), դրա ներդրումային քաղաքականության, Ֆոնդի մասնակիցներին առաջարկվող փայերի, Ֆոնդի մասնակիցների ու Ֆոնդի կառավարչի հարաբերությունների, Ֆոնդի և մասնակիցների հաշվին կատարվող վճարների և ծախսերի մասին կարևոր դրույթները:

Կանոնները մշակվել են գործող Ֆոնդի նկատմամբ կիրառելի՝ կուտակային կենսաթոշակային համակարգը և ներդրումային ֆոնդերի գործունեությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Կանոնների և օրենսդրության դրույթների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում օրենսդրության դրույթները: Կանոնների տարբեր դրույթների միջև անհամապատասխանության կամ դրանց թերի լինելու դեպքում նման դրույթները մեկնաբանվում են՝ ելնելով Ֆոնդի մասնակիցների լավագույն շահերից:

Սույն Կանոնները հաստատվել են «Ջեներալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ տնօրենների խորհրդի կողմից, և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

Ֆոնդի անվանումը

«Ջեներալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ

Ֆոնդի նկարագրությունը

Ֆոնդը հրապարակային պայմանագրային ֆոնդ է: Ըստ ներդրումային քաղաքականության այն հանդիսանում է ստանդարտ ֆոնդ, որի ներդրումային քաղաքականությունը համապատասխանում է օրենսդրությամբ ներդրումային ֆոնդերի համար սահմանված պահանջներին: Ըստ փայերի թողարկման և հետգնման կառուցակարգի հանդիսանում է բաց ֆոնդ, որի նկատմամբ կիրառվում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման և հետգնման (մարման) համար սահմանված պայմանները և սահմանափակումները:

Ֆոնդի կառավարիչը

(այսուհետ՝ Կառավարիչ)

Կառավարչի գտնվելու

«Ջեներալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ
գրանցման համար՝ 5

վայրն է՝ Ֆոնդի ակտիվների պահառուն (այսուհետ՝ Պահառու) Պահառուի գտնվելու վայրն է՝	ՀՀ, ք. Երևան, Ազատության 24/15 «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ գրանցման համար՝ 1,
Ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողը և Ֆոնդի փայերի տեղաբաշխում և մարում իրականացնող անձ (այսուհետ՝ Ռեեստրավար) Ռեեստրավարի գտնվելու վայրն է՝	ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ գրանցման համար՝ 1,
Ռեեստրավարի գտնվելու վայրն է՝	ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ

ԳԼՈՒԽ I. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ֆոնդի կանոններում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
 - **Մասնակից** - Ֆոնդի փայերի սեփականատեր: Կանոնների համաձայն Ֆոնդի Կառավարիչը մասնակից չի հանդիսանում,
 - **Ֆոնդի փայ** - Ֆոնդի թողարկած անվանական արժեթուղթ, որը հավաստում է իր տիրապետողի՝ Ֆոնդի ակտիվներում փայամասնակցության իրավունքը,
 - **Ֆոնդի զուտ ակտիվների արժեք** - Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների հանրագումարի և Ֆոնդի ստանձնած պարտավորությունների արժեքի տարբերությունն է,
 - **Փայի հաշվարկային արժեք** - հավասար է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և թողարկված և չմարված փայերի քանակի հարաբերությանը,
 - **Հաշվարկման օր** - այն օրը, երբ հաշվարկվում և հրապարակվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը,
 - **Գնահատման օր** - այն օրը, որի համար հաշվարկվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը,
 - **Կտրման պահ** - Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի գնահատման օրվա UTC+4 ժամային գոտու ժամը 23:59-ը,

- **Կոնտրազենտ** - Կառավարչից բացի գործարքի կողմ հանդիսացող անձ,
 - **Օրենսդրություն** - Ֆոնդի նկատմամբ կիրառելի՝ կուտակային կենսաթոշակային համակարգը կարգավորող օրենքներ, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտեր:
2. Կանոններում օգտագործվող այլ հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Ներդրումային ֆոնդերի մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Արժեթղթերի շուկային մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստները. եթե այլ բան սահմանված չէ Կանոններով և/կամ Կանոնների դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

ԳԼՈՒԽ II. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Ֆոնդը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրի հիման վրա ձևավորվող, անձանց օգտին կատարված կուտակային հատկացումների և դրանց ներդրման հաշվին ձևավորված ակտիվների ամբողջություն է, որը կառավարվում է Կառավարչի կողմից և հանդիսանում է Մասնակիցների ընդհանուր բաժնային սեփականությունը: Ֆոնդի ակտիվների և դրանով ստացվող եկամուտներում յուրաքանչյուր մասնակցի՝ իր մասի նկատմամբ իրավունքը հավաստվում է ֆոնդի փայով:
4. Ֆոնդի գործունեության և մասնակիցների ու Կառավարչի փոխհարաբերությունների հիմքերը սահմանվում են Օրենսդրությամբ և սույն Կանոններով:
5. Ֆոնդի հիմնական նպատակը կապիտալի ընթացիկ եկամտի և կայուն աճի ապահովումն է՝ բաժնային արժեթղթերում և դրանց հեջավորման նպատակով ձեռք բերված ածանցյալ գործիքներում ֆոնդի ակտիվների մինչև 25 տոկոսի չափով ներդրումներ կատարելու միջոցով:

ԳԼՈՒԽ III. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6. Ֆոնդի ներդրումային գործունեությունը հիմնված է ակտիվների ապահովության և եկամտաբերության, ռիսկերի դիվերսիֆիկացիայի և

համարժեք իրացվելիության ապահովման սկզբունքների վրա, որին Կառավարիչը հասնում է տարբեր ֆինանսական գործիքներում ներդրում կատարելու միջոցով:

7. Ֆոնդի Կառավարիչը Ֆոնդի մասնակիցներին չի երաշխավորում ներդրումային եկամուտ:
8. Ֆոնդի ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքն է՝ ապահովել Ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ Ֆոնդի ակտիվների մինչև 25 տոկոսը ներդնելով բաժնետոմսերում, բաժնային արժեթղթերի ֆոնդերում և այլ նմանատիպ գործիքներում: Ակտիվների մնացած մասը ներդրվում է պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այնպիսի ներդրումային ֆոնդերում, որոնց ակտիվները ներդրվում են վերը նշված պարտքային արժեթղթերում և ավանդներում:
9. Ֆոնդի ակտիվների հստակ տեղաբաշխումը ըստ տարբեր ակտիվների և ներդրումային նպատակների որոշվում է Ֆոնդի կառավարչի ընթացիկ կառավարչական գործառույթների միջոցով: Ֆոնդի ակտիվներով ներդրումներ կատարելիս Կառավարիչը որոշումներ է կայացնում ըստ տարբեր ակտիվների տեսակների, դասերի, թողարկողների, ռեգիոնալ կամ ճյուղային առանձնահատկությունների՝ մնալով օրենքով և սույն Կանոններով սահմանված Ֆոնդի ներդրումային սահմանափակումների և հիմնարար սկզբունքների շրջանակում: Ֆոնդի ակտիվները ներդրվում են՝ Ֆոնդի գործարար նպատակներից և մասնակիցների շահերից, միջազգային լավագույն փորձից և Օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներից ելնելով:
10. Կառավարիչը Ֆոնդի ակտիվները ներդնում է Օրենսդրությամբ և Կանոններով սահմանված սահմանափակումներին համապատասխան: Ֆոնդի նպատակներն ապահովելու համար Կառավարիչը՝ Ֆոնդի ակտիվները կարող է ներդնել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում՝ սույն Կանոնների 11-12-րդ կետերի համաձայն:
11. Հայաստանի Հանրապետության տարածքում Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝
 - 1) բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկը անվճարունակության (սնանկության) գործընթացում չէ,
 - 2) Հայաստանի Հանրապետության կամ ՀՀ կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,
 - 3) Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկաներում

- առևտրին թույլատրված արժեթղթերում կամ այնպիսի արժեթղթերում, որոնց համար թողարկման և/կամ առաջարկի պայմաններով նախատեսված է կարգավորվող շուկաներում առևտրի թույլտվություն ստանալը դրանց թողարկմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում,
- 4) այն ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում, որոնք վերահսկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից,
 - 5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:
12. Արտասահմանում Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝
- 1) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կամ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) անդամ պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում,
 - 2) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կենտրոնական բանկերի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,
 - 3) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում,
 - 4) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդերի փայերում (բաժնետոմսերում),
 - 5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:
13. Ֆոնդի ակտիվները ներդրվում են հետևյալ սահմանափակումների ներքո՝
- 1) Ֆոնդի՝ արտասահմանյան արժույթով ներդրումների առավելագույն չափը չպետք է գերազանցի ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Ընդ որում՝ ոչ փոխարկելի արտասահմանյան արժույթով կատարվող ներդրումների առավելագույն չափը չպետք է գերազանցի Ֆոնդի ընդհանուր ակտիվների 3 տոկոսը:
 - 2) Բանկային հաշիվներում և ավանդներում (այդ թվում՝ բանկում միջոցների ավանդագրումը հավաստող արժեթղթերում) (այսուհետ՝ բանկային ավանդ) կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը,
 - 3) Մեկ բանկում, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

համաձայն փոխկապակցված ճանաչված բանկերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը: Ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա բանկում, որն ունի առնվազն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ» վարկանիշ,

- 4) Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության համայնքերի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը,
- 5) Արտասահմանյան պետության կամ այդ պետության կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը,
- 6) Սույն կետի 4) և 5) ենթակետերով նախատեսված արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 80 տոկոսը:
- 7) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի համաձայն արժեթղթավորման ֆոնդերի թողարկած արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 5 տոկոսը:
- 8) Մեկ թողարկողի թողարկած արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը կարող է հասնել Ֆոնդի ակտիվների 25 տոկոսի, եթե այդ արժեթղթերը ապահովված պարտատոմսեր են, մասնավորապես, դրանք բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի համաձայն թողարկված ապահովված հիփոթեքային պարտատոմսեր են, ինչպես նաև օտարերկրյա բանկերի թողարկած պարտքային արժեթղթեր, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցները ներդրվում են այնպիսի ակտիվներում, որոնք՝
 - 1) այդ պարտքային արժեթղթերի վավերականության ամբողջ

- ժամանակահատվածի համար բավարար ապահովություն (ծածկույթ) են հանդիսանում դրանց գծով ամրագրված պարտավորությունների կատարման համար, և
- 2) թողարկող բանկի անվճարունակության կամ սնանկության դեպքում առաջնահերթորեն օգտագործվում են այդ պարտքային արժեթղթերի գծով պարտավորությունների կատարման (արժեթղթի մայր գումարի (անվանական արժեքի) և հաշվեգրված տոկոսների փոխհատուցման) համար:
- 9) Ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը, բացառությամբ 17-րդ կետով նախատեսված դեպքի: Ընդ որում, ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը, եթե դրանք՝
- 1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆոնդերի դեպքում բաց, հրապարակային, ստանդարտ, տարատեսականացված ներդրումային ֆոնդեր չեն.
- 2) արտասահմանյան պետությունում գրանցված ֆոնդերի դեպքում բաց և հրապարակային ներդրումային ֆոնդեր չեն, որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն ներդրումային ֆոնդի ակտիվների առնվազն 90 տոկոսը պետք է ներդրվի միայն բանկային ավանդներում, պետական պարտատոմսերում, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ թույլատրվող արժեթղթերում կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ իրացվելի ակտիվներում:
- 10) Միևնույն կառավարչի կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերում կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կառավարիչների ներդրումային ֆոնդերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 25 տոկոսը, բացառությամբ 17-րդ կետով նախատեսված դեպքի:
- 11) Մեկ թողարկողի արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսը, իսկ փոխկապակցված թողարկողների արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 15

տոկոսը:

12) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

- 1) մեկ թողարկողի ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 10 և ավելի տոկոսում.
- 2) մեկ թողարկողի ձայնի իրավունք չտվող բաժնային արժեթղթերի ավելի քան 10 տոկոսում.
- 3) մեկ թողարկողի թողարկած պարտքային արժեթղթերի ավելի քան 40 տոկոսում.
- 4) այլ ֆոնդի փայերի կամ բաժնետոմսերի ավելի քան 25 տոկոսում:

Ընդ որում, սույն մասը չի կիրառվում սույն կետի 4-5-րդ ենթակետերով նախատեսված արժեթղթերի նկատմամբ:

14. Կառավարիչը կարող է Ֆոնդի անունից ներգրավել փոխառու միջոցներ Ֆոնդի ակտիվների մինչև 10 տոկոսի չափով: Ներգրավված յուրաքանչյուր փոխառության (վարկի) ժամկետը չի կարող գերազանցել 3 ամիսը:
15. Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաոճ ապրանքներ, թանկարժեք մեքենաներ և այլն):
16. Ֆոնդի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակային և արժույթային սահմանափակումների հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքը:
17. Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել այլ ներդրումային ֆոնդում Կանոնների 13-րդ կետի 9-րդ կամ 10-րդ ենթակետերով նախատեսված սահմանաչափերից ավելի չափով, եթե այդ ներդրումային ֆոնդի կանոններով սահմանված ներդրումային քաղաքականությունը համապատասխանում է Կանոնների 11-15-րդ կետերով նախատեսված պահանջներին: Այդպիսի ներդրումային ֆոնդի ընտրության ժամանակ Կառավարիչը հաշվի է առնում ոչ միայն դրա ներդրումային քաղաքականությունը, այլև կառավարչի՝ դիվերսիֆիկացված ներդրումներ (այդ թվում՝ օտարերկրյա շուկաներում) կատարելու կարողությունը, ներքին հսկողության պատշաճ համակարգի առկայությունը, կենսաթոշակային և նմանատիպ այլ ֆոնդերի կառավարման փորձը, հեղինակավոր գործընկերների առկայությունը և այլ էական հանգամանքներ:
18. Կանոնների 13-14-րդ կետերով նախատեսված սահմանափակումները առավելագույն թույլատրելի սահմանաչափերն են: Ֆոնդի ակտիվների փաստացի ներդրումը այդ առավելագույն սահմանաչափերի ներքո կատարվում է՝ հաշվի առնելով մասնակիցների լավագույն շահերը և Ֆոնդի

ակտիվների ներդրման սկզբունքները:

19. Ֆոնդի ներդրումները կարող են չհամապատասխանել Կանոնների 13-14-րդ կետերով նախատեսված քանակային և արժույթային սահմանափակումներին, եթե Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը պակաս է երկու միլիարդ ՀՀ դրամից:
20. Ֆոնդի ներդրումներն ուղեկցվում են մի շարք ռիսկերով, որոնք կարող են ազդել Ֆոնդի եկամտաբերության և փայերի արժեքի վրա՝
 1. Շուկայական ռիսկ՝ արժեթղթերի կամ այլ ակտիվների շուկայական գների կամ տոկոսադրույքների փոփոխության արդյունքում ակտիվի արժեքի փոփոխության ռիսկ: Շուկայական ռիսկի տեսակներ են.
 - Տոկոսադրույքի ռիսկ՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում ակտիվի արժեքի փոփոխության ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկի տարատեսակներ են՝ վերագնահատման ռիսկը, բազային ռիսկը, եկամտաբերության կորի ռիսկը և օպցիոնի ռիսկը,
 - Գնային ռիսկ՝ այս ռիսկը կապված է ակտիվի գնի տատանողականության հետ: Գնային ռիսկը արտահայտվում է տվյալ գործիքի գնի փոփոխության և ընդհանուր շուկայական գների փոփոխության կախվածությունով,
 - Արտարժույթային ռիսկ՝ առաջանում է արտարժույթային ակտիվների և պարտավորությունների տարբերության կամ ոչ ամբողջությամբ հեջավորված արտարժույթային ակտիվների և պարտավորությունների տարբերության տեղական արժույթով վերագնահատման արդյունքում՝ կապված տեղական արժույթի՝ արտարժույթով արտահայտված գնի փոփոխության հետ:
 2. Շուկայական ռիսկը մեղմելու նպատակով ձեռք է բերվում բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնցում ներդրվել կամ ներդրվում են Ֆոնդի ակտիվները, դիվերսիֆիկացվում են Ֆոնդի ներդրումները, ինչպես նաև կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ,
2. Վարկային ռիսկ՝ Ֆոնդի ակտիվներում ընդգրկված արժեթղթի թողարկողի, կոնտրագենտի կամ գործարքի մյուս կողմի՝ իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի չկատարելու կամ պայմանագրի (արժեթղթի շրջանառության մեջ լինելու) ընթացքում արժեթղթի թողարկողի, կոնտրագենտի կամ պայմանագրի մյուս կողմի դեֆոլտի, վարկունակության իջեցման, վարկանշի անկման, անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալու, սնանկության ռիսկի

մեծացման արդյունքում ֆինանսական կորուստների առաջացման ռիսկն է (օրինակ՝ իր թողարկած պարտատոմսերը ժամանակին մարելու թողարկողի անկարողությունը): Վարկային ռիսկի տեսակներ են.

- Դեֆոլտի ռիսկ՝ արժեթղթի թողարկողի, կոնտրագենտի կամ գործարքի մյուս կողմի՝ իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի չկատարելու ռիսկ,
- Սնանկության ռիսկ,
- Վարկունակության իջեցման ռիսկ,
- Հաշվարկային ռիսկ՝ արժեթղթերի, ակտիվների և/կամ դրամական հոսքերի փոխանակման արդյունքում առաջացող ռիսկ կապված՝ հաշվարկային համակարգում գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները ժամանակին կամ ամբողջությամբ չկատարելու հետ: Հաշվարկային ռիսկը նվազեցնելու նպատակով գործարքները հիմնականում իրականացվում են Կարգավորվող շուկաներում, որտեղ գործում է «առաքում վճարման դիմաց» սկզբունքը:

Վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Ֆոնդի ներդրումները դիվերսիֆիկացվում են, ինչպես նաև կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ,

3. Իրացվելիության ռիսկ՝ Ֆոնդի ակտիվները ժամանակին և սահմանված արդարացի գնով իրացնելու կամ պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու անհնարինության ռիսկն է: Իրացվելիության ռիսկ է համարվում նաև գերիրացվելիության ռիսկը: Իրացվելիության ռիսկը զսպելու նպատակով Ֆոնդի ակտիվների մի մասը կարող է ներդրվել բարձր որակի իրացվելի ակտիվներում, կարճաժամկետ պարտքային արժեթղթերում և/կամ բանկային հաշիվներում: Որպես իրացվելիության ռիսկի զսպման հավելյալ գործիքներ կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ, ռեպո համաձայնագրեր, պայմանական ակտիվներ և իրացվելիության ներգրավման այլ միջոցները,
4. Պահառուի ռիսկ՝ Պահառուի անվճարունակության, սնանկացման, անգործության կամ դիտավորյալ գործողությունների հետևանքով իր կողմից ի պահ ընդունված ակտիվների կորստի կամ ոչնչացման ռիսկն է,
5. Գնաճի ռիսկ՝ գնաճի պատճառով ներդրումների իրական արժեքի նվազման ռիսկն է: Գնաճի ռիսկը կառավարելու նպատակով Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ինդեքսավորվող գործիքներում,

6. Երկրի ոչսկ' ներդրումների արժեքի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող անբարենպաստ քաղաքական, տնտեսական, արժույթային, տեխնոլոգիական զարգացումների կամ իրադարձությունների ի հայտ գալու ոչսկն է այն երկրներում, որտեղ ներդրվում են Ֆոնդի ակտիվները,
7. Իրավական, վերահսկողական և համապատասխանության ոչսկ' Ֆոնդի գործունեության բնագավառում օրենսդրության փոփոխության (մասնավորապես՝ ներդրումային ֆոնդերը և արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ինչպես նաև հարկային օրենսդրության փոփոխությունների) իրավական և դատական դեպքերի ի հայտ գալու ոչսկն է,
8. Գործառնական ոչսկ' Ֆոնդի կառավարման գործընթացներում հնարավոր կորստի ոչսկն է՝ պայմանավորված ներքին գործընթացների ոչ համարժեքությամբ, ծրագրային և տեխնիկական համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնով կամ արտաքին ազդեցություններով: Այս ոչսկը նվազեցնելու նպատակով, անընդհատ մոնիթորինգի են ենթարկվում ներքին գործընթացները, հնարավորինս ավտոմատացվում են ոչսկային գործառույթները, ինչպես նաև օգտագործվում են պահուստային տեխնիկական և ծրագրային համակարգերի հնարավորությունները, տեղեկատվությունը պարբերաբար պատճենվում է և պահվում առանձին վայրում, ցանկացած պահին այն վերականգնելու նպատակով, ըստ անհրաժեշտության կիրառվում է երկու անձի կողմից կարևոր գործառույթների կրկնակի իրականացում, կամ ստուգումների և հաստատումների տարբերակը:
21. Ֆոնդի Կառավարիչը ձգտելու է խուսափել այնպիսի իրավիճակներից, որտեղ Կառավարիչը և Ֆոնդի մասնակիցները շահերի բախման մեջ կհայտնվեն: Այնուամենայնիվ, եթե նման իրավիճակներ ի հայտ գան, Կառավարիչը առաջնահերթությունը տալու է Ֆոնդի մասնակիցների շահերին:
22. Ֆոնդի ներդրումային քաղաքականության իրականացման հետ կապված ոչսկերի կառավարման գործընթացը կանոնակարգվում է Կառավարչի ներքին ընթացակարգերով:

ԳԼՈՒԽ IV. ՓԱՅԵՐԸ, ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Ֆոնդի փայը հավաստում է իր տիրապետողի՝ Ֆոնդի ակտիվներում

- փայամասնակցության իրավունքը: Ֆոնդի փայլ սոցիալական նպատակներով թողարկվող արժեթուղթ է:
24. Ֆոնդի փայլ չի կարող միաժամանակ պատկանել մի քանի անձանց: Փայերը չեն հանդիսանում ամուսինների համատեղ սեփականությունը: Փայեր կարող են ձեռք բերել միայն ֆիզիկական անձինք և Կառավարիչը:
 25. Ֆոնդի փայերը ժառանգվում են:
 26. Մասնակիցն իրավունք ունի դիմելու Ֆոնդի փայերի մարման և մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները ստանալու համար միայն Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:
 27. Մասնակիցն իրավունք ունի տարին մեկ անգամ անվճար, ոչ ուշ, քան մինչև ապրիլի 15-ը Ռեեստրավարից ստանալու տեղեկատվություն իր կենսաթոշակային հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին, եթե Օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:
 28. Ֆոնդի փայլ մասնակցի կողմից չի կարող՝
 - 1) գրավադրվել.
 - 2) ներդրվել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում.
 - 3) նվիրաբերվել կամ օտարվել որևէ այլ եղանակով, բացառությամբ Օրենսդրությամբ և սույն Կանոններով նախատեսված դեպքերի.
 - 4) օգտագործվել որևէ այլ եղանակով, քան սահմանված է Օրենսդրությամբ և սույն Կանոններով:
 29. Մասնակցի պարտավորությունների համար մասնակցին պատկանող Ֆոնդի փայերի վրա բռնագանձում չի կարող տարածվել մինչև նրա կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելը:
 30. Ֆոնդը չի կարող թողարկել տարբեր դասերի փայեր: Մեկ փայի սկզբնական անվանական արժեքը 1000 ՀՀ դրամ է:
 31. Փայլ բաժանելի է: Փայերի բաժանումից առաջացող կոտորակային մասերը կլորացվում են ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ:
 32. Փայերը հաշվառվում են Ռեեստրավարի կողմից վարվող մասնակցի կենսաթոշակային հաշվում էլեկտրոնային գրառումների տեսքով (փայերը ոչ թղթային են):
 33. Փայլ մասնակցին Ֆոնդի ակտիվներով իրականացվող գործարքների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք չի տրամադրում:
 34. Ֆոնդի մասնակիցների ընդհանուր ժողով չի գումարվում: Մասնակիցը չի կարող պահանջել Ֆոնդի ակտիվներից իր մասնաբաժնի առանձնացում:
 35. Մասնակցի համար փայերով հավաստվող իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում փայերի թողարկման պահից և

դադարում են փայերի մարման պահից: Փայը համարվում է թողարկված մասնակիցների ռեեստրը վարողի կողմից կենսաթոշակային հաշվում նոր փայերի առկայության մասին համապատասխան գրանցում կատարելու պահից: Փայերը մարվում են դրանց մարման պահանջ ներկայացնելու պահի դրությամբ՝ օրենքով սահմանված կարգով վերջին հաշվարկած և հրապարակված տվյալ փայի հետգնման գնով:

36. Մասնակիցն իր փայերով ամրագրված իրավունքները պետք է իրականացնի բարեխղճորեն և Օրենսդրությանը ու սույն Կանոններին համապատասխան:
37. Մասնակիցն անձամբ պատասխանատու չէ Կառավարչի կողմից Ֆոնդի անունից ստանձնած պարտավորությունների համար, ինչպես նաև այն պարտավորությունների համար, որոնց կատարումը Կառավարիչն իրավունք ունի պահանջել Ֆոնդից սույն Կանոններին համապատասխան: Այդ պարտավորությունների կատարման համար մասնակցի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Ֆոնդի ակտիվներում մասնակցի ունեցած բաժնեմասով:

ԳԼՈՒԽ V. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Կառավարչի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենսդրությամբ, Կանոններով և Կառավարչի կանոնադրությամբ:
39. Կառավարիչն իրավունք ունի.
 - 1) Կառավարել Ֆոնդի ակտիվները իր մասնագիտական դատողությամբ և զգուշավորությամբ,
 - 2) Ստանալ կառավարման պարզևավճար սույն Կանոնների համաձայն,
 - 3) Պատվիրակել Ֆոնդի կառավարման գործառույթների մի մասը երրորդ անձանց, բացառությամբ այն գործառույթների, որոնց պատվիրակումն արգելված է սույն կանոններով կամ Օրենսդրությամբ,
 - 4) Իրացնել Օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:
40. Կառավարիչը պարտավոր է.
 - 1) Ներդնել իր գործառույթներին բնորոշ ներքին հսկողության պատշաճ համակարգ.
 - 2) Ֆոնդի ակտիվները ներդնել սույն Կանոններին և Օրենսդրության պահանջների համապատասխան,
 - 3) Ձեռք բերել բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ,

որոնցում Ֆոնդի հաշվին նախատեսում է ներդրումներ իրականացնել կամ արդեն իրականացրել է, պարտավոր է նաև մանրամասն ուսումնասիրել այն թողարկողի ֆինանսատնտեսական վիճակը, որի արժեթղթերը պլանավորում է ձեռք բերել կամ արդեն ձեռք է բերել Ֆոնդի հաշվին, ինչպես նաև պետք է ձեռք բերի բավարար տեղեկատվություն գործընկերների վճարունակության վերաբերյալ, որոնց հետ Ֆոնդի հաշվին իրականացվում են գործառնություններ:

41. Ֆոնդի անունից հանդես գալիս Կառավարիչը և նրա աշխատակիցները պետք է գործեն Մասնակիցների լավագույն շահերից ելնելով, իրենց իրավունքներն ու պարտականություններն իրականացնեն բարեխղճորեն, ողջամտորեն և պատշաճ մասնագիտական մակարդակով:
42. Կառավարիչը չի կարող երաշխավորել որոշակի եկամտաբերության կամ եկամտի ստացումը:
43. Կառավարիչը Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը կատարում է իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես Ֆոնդի կառավարիչ, և որ այդ գործարքներով իր ստանձնած պարտավորությունները կատարվում են բացառապես Ֆոնդի ակտիվների հաշվին:
44. Կառավարիչը Ֆոնդում պետք է ունենա առնվազն 0.15 տոկոս մասնակցություն: Սույն կետով նախատեսված պահանջը գործում է տվյալ ֆոնդի ստեղծման պահից երեք տարվա ընթացքում: Սույն կետով սահմանված մասնակցությունը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով: Կառավարիչը կարող է ձեռք բերել կամ մարել Ֆոնդի փայերը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ առանց թողարկման կամ մարման վճարի:
45. Կառավարիչն իրավունք ունի իր անունից Մասնակիցների կամ Ֆոնդի հաշվին պահանջ ներկայացնել (պարտավոր է, եթե նման պահանջի չներկայացումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել զգալի կորուստների Ֆոնդի կամ նրա Մասնակիցների համար) Պահառուի կամ երրորդ անձանց նկատմամբ:
46. Կառավարիչը պատասխանատվություն է կրում իր պարտականությունների խախտման հետևանքով Ֆոնդին կամ Մասնակիցներին պատճառված վնասի համար:
47. Կառավարիչը Ֆոնդի ակտիվների պահառության նպատակով Պահառուի հետ կնքում է պահառության պայմանագիր:

**ԳԼՈՒԽ VI. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ԶՈՒՏ
ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ**

48. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով:
49. Արտարժույթը և արտարժութային ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են ՀՀ դրամով, Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի գնահատման օրվա կտրման պահի դրությամբ՝ կազմակերպված շուկայում տվյալ արտարժույթով առևտրային նստաշրջանի վերջին գործարքի գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ արտարժույթի համար գնահատման օրվա ՀՀ կենտրոնական բանկի հրապարակված հաշվարկային փոխարժեքով:
50. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում բանկային հաշիվներում, այդ թվում նաև՝ բրոքերային հաշիվներում, դրամական միջոցների հաշվառման հաշիվներում առկա միջոցների և բանկային ավանդների արժեքը որոշվում է կտրման պահի դրությամբ տվյալ հաշիվներում առկա մնացորդային գումարների և հաշվեգրված ու չստացված տոկոսագումարների հանրագումարով: Ավանդների, դրամական միջոցների հաշվառման հաշիվների և ընթացիկ հաշիվների, այդ թվում նաև՝ բրոքերային հաշիվների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները հաշվառվում են որպես հաշվեգրված եկամուտ կտրման պահի դրությամբ: Եթե գնահատման օրը նախորդում է ոչ աշխատանքային օրվա (օրերի), ապա գնահատման օրվա դրությամբ տոկոսների հաշվեգրումը ներառում է նաև առաջիկա ոչ աշխատանքային օրվա (օրերի) համար հաշվեգրված տոկոսները: Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում ավանդների, դրամական միջոցների հաշվառման հաշիվների և ընթացիկ հաշիվների, այդ թվում նաև՝ բրոքերային հաշիվների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ:
51. ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթը գնահատվում է տվյալ արժեթղթի գնահատման օրվա փակման գնով, եթե այլ բան նախատեսված չէ Կանոններով:
52. Եթե Կանոնների 51-րդ կետով սահմանված փակման գինը հասանելի չէ (առկա չէ) գնահատման օրվա կտրման պահի դրությամբ, ապա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ոչ պարտքային արժեթուղթը գնահատվում է տվյալ արժեթղթի՝ գնահատման օրվան նախորդող վերջին հայտնի փակման գնով, բացառությամբ եթե այդ գինը հասանելի չէ (առկա չէ) գնահատման օրվա դրությամբ վերջին 30

աշխատանքային օրերից ոչ մեկի համար:

53. Եթե կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթի համար Կանոնների 51-րդ կետով սահմանված փակման գինը հասանելի չէ (առկա չէ), ապա այդ արժեթուղթը գնահատվում է տվյալ շուկայում գնահատման օրվա առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների միջին թվաբանականով:
54. Եթե պարտքային արժեթղթի համար Կանոնների 51-րդ և 53-րդ կետերով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն), ապա այդ արժեթուղթը գնահատվում է դրա՝ գնահատման օրվան նախորդող վերջին հայտնի համապատասխան գնով, որը որոշվել է Կանոնների 51-րդ և 53-րդ կետերով սահմանված հաջորդականությամբ, բացառությամբ եթե այդ գները հասանելի չեն (առկա չեն) գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ մեկի համար:
55. Եթե Կանոնների 51-54-րդ կետերով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ մեկի համար, ապա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթի արժեքը որոշվում է Կառավարչի կողմից՝ բարեխղճորեն, ելնելով ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ որոշված դրա հնարավոր վաճառքի ողջամիտ գնից:
56. Օտարերկրյա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթը գնահատվում է գնահատման օրվա կտրման պահի դրությամբ միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական աղբյուրներից տվյալ արժեթղթի համար ստացված գնով: Տեղեկատվական աղբյուրները սահմանվում են Կառավարչի ներքին իրավական ակտերով: Եթե օտարերկրյա արժեթղթերի գծով գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրվա համար առկա է Կանոններով նախատեսված նոր գին, ապա տվյալ արժեթղթի գնահատման համար կարող է հիմք ընդունվել ստացված նոր գինը՝ սույն գլխի համաձայն:
57. ՀՀ դրամով արտահայտված պետական արժեթղթերը գնահատվում են գնահատման օրվա կտրման պահի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հիման վրա:
58. Հայաստանի Հանրապետության անունից թողարկված արտարժույթով արտահայտված արժեթուղթի գնահատման համար հիմք են ընդունվում միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական

աղբյուրներից ստացված գները:

59. Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված փակ կամ միջակայքային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) արժեքը որոշվում է գնահատման օրը կտրման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հրապարակված հաշվարկային արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ գնահատման օրը գնահատման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հայտնի փակման գնով: Եթե փակ կամ միջակայքային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) գծով գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրվա համար հրապարակվել է սույն կետով սահմանված նոր հաշվարկային արժեք, ապա տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) գնահատման համար կարող է հիմք ընդունվել նոր հրապարակված հաշվարկային արժեքը:
60. Բաց ներդրումային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) գինը որոշվում է գնահատման օրվա դրությամբ փայերի (բաժնետոմսերի) վերջին հասանելի հաշվարկային արժեքի հիման վրա, կամ սույն Կանոնների համաձայն՝ ավելի թարմ հաշվարկային արժեքով (առկայության դեպքում):
61. Հայաստանի Հանրապետությունում բաժանորդագրման կամ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված ոչ պետական արժեթղթերը, մինչև կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվելը և կարգավորվող շուկայում դրանց գնի առկայությունը, գնահատվում են գնահատման օրը թողարկողի կողմից հրապարակված վերջին հասանելի գներով: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները մինչև տվյալ արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալը վերցվում են հրապարակման ճշտությամբ առանց կլորացման: Այն դեպքում, երբ բաժանորդագրման կամ հրապարակային առաջարկի միջոցով ձեռք բերված նոր թողարկված ոչ պետական արժեթղթերի համար թողարկողի կողմից հրապարակված գին հասանելի չէ, տվյալ արժեթղթերը գնահատվում են դրանց ձեռքբերման գնով (կլորացված ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ):
62. Հայաստանի Հանրապետությունում առաջնային աճուրդի միջոցով ձեռք բերված նոր թողարկված ոչ պետական արժեթղթերը, մինչև կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվելը և կարգավորվող շուկայում դրանց գնի առկայությունը, գնահատվում են տվյալ առաջնային աճուրդի միջին կշռված գնով (կլորացված ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ):
63. Օտարերկրյա արժեթղթերը և դրանց ձեռքբերման/վաճառքի հետ կապված միջնորդավճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում

ներառվում են օտարերկրյա բրոքերից/Կոնտրագենտից գործարքի հաստատումը ստանալու օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00 և օտարերկրյա բրոքերից/Կոնտրագենտից գործարքի հաստատումը ստանալու օրվան հաջորդող օրվա դրությամբ, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատումը օտարերկրյա բրոքերի/Կոնտրագենտի կողմից ստացվել է ոչ աշխատանքային օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա արժեթղթերի տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում (ոչ աշխատանքային օրերին նախորդող Գնահատման օրվա ֆոնդի զուտ ակտիվների արժեքում):

64. Բաժանորդագրության միջոցով ձեռք բերված/վաճառված օտարերկրյա ֆոնդերի փայերը և դրանց ձեռքբերման/վաճառքի հետ կապված միջնորդավճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են գնի հաստատման վերաբերյալ Պահառուի/Կոնտրագենտի կողմից ստացված տեղեկատվության օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00 և Պահառուի/Կոնտրագենտի կողմից գնի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու օրվան հաջորդող օրվա դրությամբ, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատումը Կառավարիչը Պահառուից/Կոնտրագենտից ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում բաժանորդագրության միջոցով ձեռք բերված/վաճառված օտարերկրյա ֆոնդերի փայերի տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում (ոչ աշխատանքային օրերին նախորդող Գնահատման օրվա ֆոնդի զուտ ակտիվների արժեքում):
65. Կարգավորվող շուկայում առևտրին չթույլատրված արժեթուղթը գնահատվում է դրա հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ:
66. Օտարերկրյա պահառուի մոտ հաշվառվող դրամական միջոցների, օտարերկրյա արժեթղթերի և ներդրումային ֆոնդերի փայերի փոխանցման

հետ կապված միջնորդավճարները և այլ վճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են տվյալ գործարքների կնքման կամ տվյալ գործարքների կնքման վերաբերյալ տեղեկությունները ստանալու օրվա դրությամբ, իսկ վճարումը իրականացվել է Պահառուի կողմից հաշիվը դուրս գրելուց 10 աշխատանքային օրվա ընթացքում:

67. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում արտասահմանյան օտարերկրյա պահառու/ենթապահառու բանկում փոխարկված արտարժույթը արտացոլվում է փոխարժեքի հաստատման վերաբերյալ Պահառուի/Կոնտրագենտի կողմից ստացված տեղեկատվության օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00 և փոխարկման օրվան հաջորդող օրվա դրությամբ, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե արտարժույթի փոխարկման հաստատումը Ֆոնդի Կառավարիչը Պահառուից ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:
68. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա արժեթղթերի, Հայաստանի Հանրապետության անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերի (եվրոպարտատոմսեր) և Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերությունների կողմից արտարժույթով թողարկված եվրոպարտատոմսերի ստացվելիք արժեկտրոնները հաշվեգրվում և վերագնահատվում են օրական կտրվածքով յուրաքանչյուր արժեկտրոնին բնորոշ հաշվեգրման և վերագնահատման սկզբունքին համապատասխան: Եթե արժեկտրոնի վճարման վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը ստանում է ոչ աշխատանքային օրերին, ապա դրանք ներառվում են ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:
69. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկման համար Ֆոնդի ակտիվները գույքագրվում են կտրման պահի դրությամբ:
70. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում արժեթղթերի գների կլորացման կանոններն են՝
 - 1) ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ոչ պետական արժեթղթերի գները կլորացվում են ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ,

- 2) ՀՀ դրամով արտահայտված պետական արժեթղթերի, Հայաստանի Հանրապետության անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերի, որոնք շրջանառվում են օտարերկրյա կարգավորվող շուկաներում (եվրոպարտատոմսեր) և Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերությունների կողմից արտարժույթով թողարկված եվրոպարտատոմսերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման,
 - 3) Օտարերկրյա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված օտարերկրյա արժեթղթերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման,
 - 4) Ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) գները վերցվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման:
71. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկը կատարվում է Հաշվարկման օրը մինչև UTC+4 ժամային գոտու ժամը 11:00 Ֆոնդի Կառավարչին հասանելի ամենաթարմ տեղեկատվությամբ, բացառությամբ սույն Կանոններով նախատեսված դեպքերի:
72. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը որոշվում է՝ Ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքից նվազեցնելով Ֆոնդի ստանձնած պարտավորությունները (Ֆոնդի նկատմամբ պահանջները), որոնք հաշվարկվում են հաշվեգրման կարգով և կարող են ներառել՝
- 1) Կառավարչի պարգևավճարը (ներառյալ՝ Պահառուի պարգևավճարը),
 - 2) Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտի վճարը,
 - 3) Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը, այդ թվում՝ բրոքերային միջնորդավճարները և գործարքների իրականացման հետ կապված այլ վճարները (միջնորդավճարներ, հարկեր),
 - 4) արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցումների գծով վճարները,
 - 5) Ֆոնդի փայերի հետգնման (մարման) համար ֆոնդի մասնակիցներին վճարման ենթակա գումարները,
 - 6) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գումարը,
 - 7) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գծով վճարվելիք տոկոսները, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսները,
 - 8) Ֆոնդի ակտիվների հաշվին վճարման ենթակա պարտադիր վճարները:

73. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Կառավարչի պարզևավճարը հաշվարկվում է գնահատման նախորդ օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ: Գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրերի համար հաշվեգրված Կառավարչի պարզևավճարը ներառվում է գնահատման նախորդ օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում:
74. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտի վճարը հաշվեգրվում է գծային ամորտիզացիայի մեթոդով:
75. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում պարտավորությունները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ: Պարտավորությունների կուտակումը ոչ աշխատանքային օրերի համար արտացոլվում է գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:
76. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում փայերի մարման պարտավորությունները ներառվում են փայերի սառեցման օրվա համար հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում: Գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրերին սառեցված փայերը և վերջիններիս հետ կապված մարման պարտավորությունները ներառվում են գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:
77. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելուց հետո որևէ սխալի, էական իրադարձության կամ հանգամանքի տեղի ունենալու կամ ի հայտ գալու դեպքում, որը Օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Կառավարչի մասնագիտական կարծիքով էականորեն կարող է ազդել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի վրա, Կառավարիչը կարող է վերագնահատել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը և/կամ փայի հաշվարկային արժեքը, եթե վերագնահատման չիրականացմամբ կվնասվեին մասնակիցների շահերը:
78. Փայի հաշվարկային արժեքը և թողարկման ու մարման գները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ:
79. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, փայի հաշվարկային արժեքը և մարման ու թողարկման գները հաշվարկվում և հրապարակվում են յուրաքանչյուր աշխատանքային օր: Տարեվերջյան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է առանձին՝ տարեվերջյան հաշվետվության մեջ ներառվելու նկատառումով, և յուրաքանչյուր տարվա առաջին աշխատանքային օրվա համար հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Տարեվերջյան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկը ներառում է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը հաշվեգրված բոլոր ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական և արտասահմանյան

շուկաներում վերջին հասանելի գները, իսկ տարեսկզբյան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկը ներառում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև առաջին աշխատանքային օրը ներառյալ հաշվեգրված ակտիվները և պարտավորությունները: Հաշվարկման օրվան նախորդող ոչ աշխատանքային օրերի համար հաշվեգրումները ևս ներառվում են գնահատման օրվա հաշվարկում:

80. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի գնահատմանը և հաշվարկմանը վերաբերող և սույն Կանոններով չկարգավորված հարցերը կանոնակարգվում են ՀՀ կենտրոնական բանկի «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» Կանոնակարգ 10/04-ով:

ԳԼՈՒԽ VII. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

81. Ֆոնդի փայերի թողարկումն ու տեղաբաշխումը կազմակերպում և իրականացնում է Ռեեստրավարը՝ օրենքին, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին և սույն Կանոններին համապատասխան:
82. Փայերի թողարկումը շարունակական է, և թողարկման ծավալն ու թողարկվող փայերի քանակը ֆիքսված չեն:
83. Փայերի տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման վճար չի գանձվում, և փայի տեղաբաշխման գինը համընկնում է հաշվարկային արժեքի հետ: Փայերը տեղաբաշխվում են տեղաբաշխման պահին վերջին հայտնի փայի տեղաբաշխման գնով:
84. Տեղաբաշխվող փայերի քանակը որոշվում է փոխանցված միջոցների և տեղաբաշխման գնի հարաբերությամբ:
85. Տեղաբաշխված փայերն արտացոլվում են մասնակցի հաշվում:
86. Ֆոնդի փայեր թողարկվում են այն անձանց համար, ում համար մուտքագրվել են միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում Ռեեստրավարի համար բացված հաշվին: Տեղաբաշխվող փայերի քանակը որոշվում է փոխանցված գումարի և փայի տեղաբաշխման գնի հարաբերությամբ:
87. Ֆոնդի փայերի թողարկման մանրամասն ընթացակարգը սահմանվում է Օրենսդրությամբ և Ռեեստրավարի կանոններով:

ԳԼՈՒԽ VIII. ՓԱՅԵՐԻ ՀԵՏԳՆՈՒՄԸ (ՄԱՐՈՒՄԸ) ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

88. Մասնակիցներին պատկանող Ֆոնդի փայերի հետգնումն (մարումն) իրականացվում է միայն հետևյալ դեպքերում՝
- 1) Կուտակային կենսաթոշակ ստանալու դեպքում,
 - 2) Մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը Օրենսդրությամբ սահմանված թույլատրելի դեպքերում,
 - 3) Փայերի փոխանակման դեպքում,
 - 4) Օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
89. Փայերի հետգնման (մարման) արդյունքում վճարման ենթակա գումարը որոշվում է հետգնվող (մարվող) փայերի քանակի և փայերի հետգնման (մարման) գնի արտադրյալով և վճարվում է Ֆոնդի ակտիվներից:
90. Փայերի հետգնումը (մարումը) իրականացնելու օրը մարված փայերը դուրս են գրվում մասնակցի հաշվից:
91. Ֆոնդի փայերի հետգնումը (մարումը) և դրա արդյունքում միջոցների վճարումը կազմակերպում է Ռեեստրավարը:
92. Ֆոնդի փայերի հետգնման (մարման) համար Մասնակիցը պետք է Ռեեստրավարին ներկայացնի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 10/07) նախատեսված համապատասխան դիմում:
93. Ֆոնդի փայերի հետգնման (մարման) մանրամասն ընթացակարգը սահմանվում է Օրենսդրությամբ և Ռեեստրավարի կանոններով:
94. Փայերի հետգնման (մարման) ժամանակ (այդ թվում՝ փայերի փոխանակման դեպքում) Մասնակցից գանձվում է 1 (մեկ) տոկոս հետգնման (մարման) վճար, բացառությամբ Օրենսդրությամբ սահմանված կարգով կենսաթոշակի անցնելիս կուտակված միջոցները անուփոփոխ, ծրագրային վճարի կամ միանվագ վճարի տեսքով ստանալու համար փայերի մարման դեպքում, ինչպես նաև սույն Կանոնների 110-րդ կետով նախատեսված դեպքերում:

95. Փայերի ժառանգման ժամանակ, եթե ժառանգը ներկայացրել է ժառանգված փայերի մարման և մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները միանվագ ստանալու դիմում, ապա Ֆոնդի փայերի հետգնման (մարման) ժամանակ գանձվում է լրացուցիչ 2 տոկոս հետգնման (մարման) վճար՝ Ֆոնդի օգտին:

ԳԼՈՒԽ IX. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

96. Մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռքբերում, եթե.
- 1) Լրացել է Մասնակցի կենսաթոշակային տարիքը,
 - 2) Լրացել է Մասնակցի 55 տարին, և նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը բավարարում է սույն Կանոնների 98-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված պայմանը:
97. Կուտակային կենսաթոշակների տեսակներն են՝
- 1) Անուիտետ,
 - 2) Ծրագրային վճար,
 - 3) Միանվագ վճար:
98. Կախված Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքից՝ Մասնակիցն իր կուտակային կենսաթոշակը կարող է ստանալ հետևյալ ձևերով՝
- 1) Եթե Մասնակցի միջոցները Օրենսդրության համաձայն հավասարաչափ ամսական վճարների վերաձելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա Մասնակիցն իրավունք ունի կուտակային կենսաթոշակը ստանալու անուիտետի կամ ծրագրային վճարների կամ միանվագ վճարի ձևով,
 - 2) Եթե Մասնակցի միջոցները Օրենսդրության համաձայն հավասարաչափ ամսական վճարների վերաձելու դեպքում ամսական գումարը մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, բայց փոքր այդ կենսաթոշակի հնգապատիկից կամ հավասար է այդ կենսաթոշակի հնգապատիկին, ապա Մասնակիցը պարտավոր է իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման արդյունքում ստացված գումարի չափով Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անուիտետի պայմանագիր,

- 3) եթե Մասնակցի միջոցները Օրենսդրության համաձայն հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա Մասնակիցը պարտավոր է իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մի մասի մարման արդյունքում ստացված միջոցների հաշվին Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անուիտետի պայմանագիր այն գումարի չափով, որը հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը կկազմի հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, իսկ մնացած մասը Մասնակիցն իրավունք ունի ստանալու անուիտետի կամ ծրագրային վճարների կամ միանվագ վճարի ձևով:
99. Իր ընտրության վերաբերյալ դիմումը Մասնակիցը ներկայացնում է Ռեեստրավարին՝ Կանոնակարգ 10/07-ին համապատասխան:
100. Կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքը ծագում է անկախ Մասնակցի՝ այլ աղբյուրներից անուիտետ, պետական կենսաթոշակ կամ նպաստ ստանալու հանգամանքից:
101. Ծրագրային վճարը Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մասնակի մարումների հաշվին ամսական կտրվածքով վճարվող կենսաթոշակ է՝ բաշխված ըստ կյանքի սպասվող տևողության ամիսների:
102. Ծրագրային վճարների հաշվարկման մեթոդաբանությունը և հաշվարկման կարգը սահմանվում է Օրենսդրությամբ:
103. Անուիտետը վճարվում է ապահովագրական ընկերության կողմից: Ապահովագրական ընկերությունը անուիտետի պայմանագրով պարտավորվում է Մասնակցի համար իրեն միանվագ փոխանցված դրամական միջոցների դիմաց Մասնակցին վճարել անուիտետ:
104. Եթե Մասնակիցը ցանկանում է կուտակային կենսաթոշակը ստանալ անուիտետի տեսքով, ապա նա Ռեեստրավարին է ներկայացնում Կանոնակարգ 10/07-ով նախատեսված համապատասխան դիմում՝ նշելով ընտրված ապահովագրական ընկերության և անուիտետի պայմանագրի մասին տեղեկություններ, ինչպես նաև տեղեկություններ մարվող փայերի և ապահովագրական ընկերությանը տեղեկություններ փոխանցելու մասին:
105. Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Ռեեստրավարը կազմակերպում է Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումն ու դրա արդյունքում ձևավորված միջոցների փոխանցումը Մասնակցի դիմումում նշված ապահովագրական ընկերությանը՝ անուիտետ գնելու նպատակով:

ԳԼՈՒԽ Խ.ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

106. Մասնակիցն իրավունք ունի փոխանակել իրեն պատկանող Ֆոնդի փայերը (բոլորը կամ դրանց մի մասը) ռեեստրավարման համակարգում Մասնակիցների համար հասանելի այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (այդ թվում՝ այլ կառավարչի կողմից կառավարվող) փայերով՝ Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
107. Ֆոնդի փայերը փոխանակելու համար Մասնակիցը պետք է Ռեեստրավարին ներկայացնի Կանոնակարգ 10/07-ով նախատեսված համապատասխան դիմում:
108. Փոխանակման արդյունքում փոխանակվող փայերը մարվում են և մարման գնին համապատասխան գումարի չափով (մարվող փայերի քանակի և փայի մարման գնի արտադրյալը) ձեռք են բերվում այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր:
109. Փայերի փոխանակումն իրականացվում է փոխանակման պահանջը ներկայացվելու պահի դրությամբ վերջին հայտնի հետզնման (մարման) և նոր փայեր թողարկելու պահին հայտնի տեղաբաշխման գներով:
110. Փայերի փոխանակման ժամանակ մարման վճար չի գանձվում հետևյալ դեպքերում՝
- 1) Մասնակցի կողմից իր Ֆոնդի փայերը Կառավարչի այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում.
 - 2) Մասնակցի կողմից Ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում առաջին անգամ այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում, բացառությամբ այն փոխանակման դեպքերի, երբ Ֆոնդի փայերը (դրանց մի մասը) ձեռք են բերվել վերջին 12 ամիսների ընթացքում տեղի ունեցած փայերի փոխանակման գործարքի արդյունքում: Ընդ որում, սույն կետի իմաստով՝
 - ա. առաջին անգամ փոխանակում է համարվում նաև Ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում մեկից ավելի կենսաթոշակային ֆոնդերի փայերով փոխանակումը, եթե այդ փոխանակման գործարքների համար Օրենսդրությամբ նախատեսված փոխանակման դիմումը (դիմումները) Ռեեստրավարին է (են) ներկայացվել նույն օրվա ընթացքում,
 - բ. Ֆոնդի փայերի փոխանակման հաշվարկում չեն ներառվում Կառավարչի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակման գործարքները.

- 3) Օրենսդրության համաձայն՝ Մասնակցի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո Մասնակցի (մասնակցի համար) առաջին անգամ ընտրած կենսաթոշակային ֆոնդի փայերի առաջին անգամ փոխանակման դեպքում.
 - 4) Ժառանգի կողմից Օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգված փայերի առաջին փոխանակման գործարքի դեպքում.
 - 5) Ֆոնդի դադարեցման դեպքում Մասնակցի ակտիվների հաշվին այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռքբերելիս.
 - 6) Օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
111. Ֆոնդի փայերի փոխանակման գործընթացը կազմակերպում է Ռեեստրավարը:
112. Փայերի փոխանակման ժամանակ Մասնակցին գումար չի վճարվում:

ԳԼՈՒԽ XI. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

113. Կառավարիչը Ֆոնդի փայեր ձեռք բերելու համար հանձնարարական է ներկայացնում իր բանկին՝ Ռեեստրավարի համապատասխան հաշվեհամարին սեփական փայերի ձեռքբերման համար նախատեսված գումարը փոխանցելու համար:
114. Կառավարչի՝ Ֆոնդի փայեր ձեռք բերելու գումարը ստանալուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում Ռեեստրավարը Ֆոնդի Կառավարչի հաշվին է փոխանցում Կառավարչի կողմից ձեռքբերվող Ֆոնդի փայերը:
115. Կառավարչի կողմից ձեռքբերվող փայերի քանակը որոշվում է՝ հիմք ընդունելով փայերի թողարկման պահի դրությամբ փայերի վերջին հայտնի տեղաբաշխման գինը:
116. Ռեեստրավարը Ֆոնդի փայերը հետզնելու (մարելու) դիմում ստանալու դեպքում առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում, կազմակերպում է Ֆոնդի փայերի հետզնումը (մարումը) և հետզնման (մարման) արդյունքում ստացված միջոցների վճարումը:
117. Ռեեստրավարը Ֆոնդի փայերը հետզնելու (մարելու) դիմում ստանալուց հետո ձևավորում է փայերի մարման պահանջը և որոշում է մարման գինը և ընդհանուր ծավալը: Ռեեստրավարը Կառավարչին տրամադրում է տեղեկություն պահանջի մանրամասների վերաբերյալ, ներառյալ մարման ենթակա փայերի քանակի և մարվող ընդհանուր գումարի մասին:

118. Կառավարիչը մարման պահանջի մանրամասների վերաբերյալ տեղեկությունը Ռեեստրավարից ստանալուց հետո առավելագույնը 9 աշխատանքային օրվա ընթացքում Ռեեստրավարին է ուղարկում համապատասխան մարման պահանջից բխող հանձնարարականը, որի արդյունքում իրակացվում է ձևավորված փայերի մարումը:
119. Փայերի հետգնում (մարում) կատարվում է՝ հիմք ընդունելով Ֆոնդի փայի՝ դիմումը ներկայացնելու պահի դրությամբ վերջին հայտնի հետգնման (մարման) գինը:

ԳԼՈՒԽ XII. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՈՒՄԸ

120. Ֆոնդի փայերի թողարկումը Կառավարչի կողմից կարող է կասեցվել հետևյալ դեպքերում՝
- 1) Կարգավորվող շուկաների բնականոն գործունեության դադարում կամ ձախողումներ (այդ թվում՝ գործարքների կնքման սահմանափակումների կիրառում), որոնք խոչընդոտում են Ֆոնդի ակտիվների արժեքի ճշգրիտ որոշմանը կամ ակտիվների վաճառքին՝ Ֆոնդի փայերի մարումներն իրականացնելու համար (օրինակ՝ ֆոնդի ակտիվներում ներառված ֆինանսական գործիքների գնանշումների դադարում, առևտրային կամ տեղեկատվական համակարգերի խափանումներ և այլն):
 - 2) Գործառնական և տեխնիկական խնդիրներ, որոնք խոչընդոտում են ֆինանսական շուկանում գործառնությունների իրականացմանը, և այդպիսով, կարող են բացասաբար ազդել Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների վրա:
 - 3) Այլ գործոններ, այդ թվում բնական աղետները, ինչպես նաև այն գործոնները, որոնք անհնար են դարձնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի որոշումը, ֆոնդի ակտիվների գնահատումը, տնօրինումը և (կամ) դրանց գծով եկամուտների ստացումը:
121. Փայերի հետգնումը (մարումը) Կառավարչի կողմից կարող է կասեցվել սույն Կանոնների 120-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև հետևյալ հիմքերով՝
- 1) Իրացվելիության խնդիրների առաջացում, երբ Ֆոնդում առկա դրամական միջոցները բավարար չեն փայերի հետգնման (մարման) համար, և Ֆոնդի ակտիվները կարող են վաճառվել զգալի կորուստներով:

- 2) Փայերի հետզնման (մարման) արդյունքում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը էապես կնվազի և (կամ) կնվազի Օրենսդրությամբ սահմանված՝ նվազագույն մեծությունից:
122. Սույն կանոնների 120-121-րդ կետերով նախատեսված դեպքերում Ֆոնդի փայերի թողարկումը կամ հետզնումը (մարումը) կասեցվում է ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով՝ նախապես տեղեկացնելով ՀՀ կենտրոնական բանկին, Ռեեստրավարին և Պահառուին՝ նշելով դրա հիմքերը, ինչպես նաև այդ մասին տեղեկատվությունը երեք օրվա ընթացքում հրապարակելով Ռեեստրավարի և Կառավարչի պաշտոնական ինտերնետային կայքում:
123. Փայերի թողարկումը կամ հետզնումը կարող է կասեցվել նաև ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ որոշմամբ:
124. Փայերի փախանակում չի կարող իրականացվել այն ժամանակահատվածում, որի ընթացքում կասեցված է փոխանակման ենթակա Ֆոնդի փայերի հետզնումը (մարումը) կամ նոր փայերի թողարկումը:

ԳԼՈՒԽ XIII. ՊԱՏՎԻՐԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ

125. Կառավարիչը կարող է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի, Փայերի հաշվարկային արժեքի, տեղաբաշխման ու հետզնման (մարման) գների հաշվարկումը պատվիրակել Ֆոնդի Պահառուին:
126. Օրենսդրության համաձայն, ստորև նշված գործառույթներն իրականացնում է Ռեեստրավարը.
- 1) Ֆոնդի Մասնակիցների ռեեստրի վարումը,
 - 2) Ֆոնդի փայերի թողարկման և մարման կազմակերպումը,
 - 3) Մասնակիցներին սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի, հաշվի վերաբերյալ հաշվետվությունների, անհրաժեշտ այլ տեղեկատվության տրամադրումը և այլ սպասարկման ծառայություններ:
127. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման նպատակով իրականացվող գործողությունների իրականացումը Կառավարիչը պատվիրակել է Ռեեստրավարին: Վերջինս այն իրականացնում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացման կանոնակարգի համաձայն:
128. Բացի սույն Կանոնների 125-127 կետերում նշված ծառայություններից,

Կառավարիչը կարող է երրորդ անձանց պատվիրակել նաև հետևյալ գործառույթների կատարումը՝

- 1) Ֆոնդի կառավարման հետ կապված իրավաբանական գործառույթներ և հաշվապահական հաշվառման կազմակերպում,
- 2) կառավարչական այլ գործառույթներ, բացառությամբ՝ Ֆոնդերի ներդրումային որոշումների հետ կապված գործառույթների:

129. Կառավարիչը կարող է պատվիրակել կառավարման ենթակա Ֆոնդի ակտիվների մի մասի կառավարումը, եթե դրա արդյունքում պատվիրակման պայմանագրի կնքման օրվա դրությամբ ընդհանուր պատվիրակված ակտիվների մասը էապես չի գերազանցի պատվիրակումից հետո Կառավարչի կողմից կառավարվող Ֆոնդի ակտիվների մասը: Ընդ որում՝ պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո Կառավարչի կառավարման ներքո գտնվող Ֆոնդի ակտիվների մասը որոշելու համար հաշվի է առնվում ոչ միայն պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո Կառավարչի կառավարման ներքո գտնվող ֆոնդի ակտիվների մեծությունը, այլ նաև տվյալ Ֆոնդի ակտիվների հետևյալ որակական չափանիշները.

- 1) Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը, դրա ռիսկայնության աստիճանը,
- 2) Ֆոնդի ներդրումային նպատակներին հասնելու տեսանկյունից
- 3) Ֆոնդի ակտիվների կարևորությունը,
- 4) Ֆոնդի ակտիվների ներդրումների աշխարհագրական և ոլորտային բաշխվածությունը,
- 5) Կառավարչի և կոնտրադենտի գործունեության տարածաշրջանները,
- 6) Կառավարչի և կոնտրադենտի կառուցվածքը, այդ թվում՝ արդյոք Կառավարիչը և կոնտրադենտը ընդգրկվում են միևնույն խմբում, թե ոչ:

130. Կառավարիչը Ֆոնդի կառավարման գործառույթների պատվիրակման նպատակով նախնական համաձայնություն ստանալու համար ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի «Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանանները» Կանոնակարգ 10/13-ով նախատեսված փաստաթղթերը:

131. Ֆոնդի կառավարման գործառույթների պատվիրակման պայմանագրի էական պայմանները, գործառույթների պատվիրակման պայմանները,

պատվիրակման նախնական համաձայնության կարգն ու պատվիրակման հետ կապված այլ էական պայմանները կարգավորվում են ՀՀ կենտրոնական բանկի «Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանները» Կանոնակարգ 10/13-ով:

132. Գործառույթների պատվիրակման դեպքում Կառավարիչը շարունակում է պատասխանատվություն կրել պատվիրակված գործառույթների պատշաճ կերպով և բարեխղճորեն իրականացման համար:

ԳԼՈՒԽ XIV. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ

133. Ֆոնդի ակտիվների հաշվին վճարվում է Կառավարչի պարգևավճար: Այն հաշվարկվում է գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ տարեկան 1.1 տոկոս, որը բաղկացած է 0.95 տոկոս կառավարման վճարից և 0.15 տոկոս Պահառուի և Ռեեստրավարի վճարից:
134. Եթե Ֆոնդի ակտիվները ներդրվում են Կանոնների 17-րդ կետով նախատեսված ներդրումային ֆոնդում, ապա այդ ֆոնդում ներդրված ակտիվների մասով Կառավարչի պարգևավճարը կազմում է 0.25 տոկոս, որը բաղկացած է 0.1 տոկոս կառավարման վճարից և 0.15 տոկոս Պահառուի և Ռեեստրավարի վճարից, և Կանոնների 133-րդ կետով նախատեսված 1.1 տոկոս պարգևավճարը կիրառվում է միայն այլ ակտիվներում ներդրումների մասով: Ընդ որում, Ֆոնդի ընթացիկ հաշվում առկա՝ ներդրման համար նախատեսված դրամական միջոցները չեն համարվում այլ ակտիվներում ներդրում:
135. Պահառուի և Ռեեստրավարի վճարի նվազման դեպքում (ըստ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի սակագների մասին կանոնների) համապատասխան չափով նվազեցվում է Կառավարչի պարգևավճարը:
136. Կառավարչի պարգևավճարը հաշվեգրվում է օրական կտրվածքով և վճարվում ոչ ուշ, քան տվյալ ամսվան հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը: Եթե Կառավարչի հաշվեգրված պարգևավճարը պարունակում է լումաներ, ապա վճարման ժամանակ լումաները կլորացվում են դեպի ներքև՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

137. Ֆոնդի ակտիվների հաշվին, բացի Կառավարչի պարզևավճարից, թույլատրվում է իրականացնել Ֆոնդի կառավարման հետ կապված հետևյալ ծախսերը.
- 1) Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը, այդ թվում՝ գործարքների կնքման հետ կապված վճարները (միջնորդավճարները), ինչպես նաև արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցումների գծով վճարները,
 - 2) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գծով վճարվելիք տոկոսները, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսները,
 - 3) Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտի վճարը:
138. Կանոնների 137-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փաստացի ծախսերի տարեկան ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել՝
- 1) Ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքի 0.2 տոկոսը, եթե Ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքը չի գերազանցում մեկ միլիարդ դրամը.
 - 2) Ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքի 0.1 տոկոսը, եթե Ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքը գերազանցում է մեկ միլիարդ դրամը:
139. Կանոնների իմաստով՝ Ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքը տվյալ տարվա համար ֆոնդի զուտ ակտիվների արժեքների միջին թվաբանական մեծությունն է, որը որոշվում է տարվա ընթացքում հաշվարկված՝ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքների հանրագումարը բաժանելով Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման պարբերականության (տարվա ընթացքում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկների քանակի) վրա:
140. Կանոնների 137-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստացի ծախսի (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) տարեկան ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել՝
- 1) 12 միլիոն դրամը, եթե Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը չի գերազանցում 25 միլիարդ դրամը,
 - 2) 12 միլիոն դրամի և 25 միլիարդ դրամը գերազանցող գումարի 0,01 տոկոսի հանրագումարը, եթե Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը գերազանցում է 25 միլիարդ դրամը, սակայն չի գերազանցում 50 միլիարդ դրամը,

- 3) 14,5 միլիոն դրամի և 50 միլիարդ դրամը գերազանցող գումարի 0,005 տոկոսի հանրագումարը, բայց ոչ ավելի, քան 17 միլիոն դրամը, եթե Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը գերազանցում է 50 միլիարդ դրամը:
141. Սույն բաժնում չնշված այլ ծախսերը, ներառյալ՝ Պահառուի և Ռեեստրավարի վճարները, ներդրումային առաջարկների և հետազոտությունների ձեռքբերման ծախսերը, Ֆոնդի ակտիվների ներդրման հետ կապված իրավաբանական ծախսերը, դատական ծախսերը, կատարվում են Կառավարչի հաշվին:
142. Պահառուի և Ռեեստրավարի պարգևավճարը կատարվում է համաձայն «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Սակագների մասին կանոնների»:

ԳԼՈՒԽ XV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

143. Ֆոնդի հաշվապահական հաշվառումը կատարվում է և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունելի և միջազգային պրակտիկայում նման ֆոնդերի համար ընդունված սկզբունքներին համապատասխան:

ԳԼՈՒԽ XVI. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

144. Ֆոնդի ակտիվների ներդրումից ձևավորված ողջ եկամուտը վերաներդրվում է Ֆոնդում՝ Ֆոնդի մասնակիցների լավագույն շահերից ելնելով: Ֆոնդի շահույթի բաշխում շահաբաժինների տեսքով չի նախատեսվում:
145. Մասնակցի՝ Ֆոնդի եկամտի մասնաբաժինը արտացոլվում է Ֆոնդի փայի հաշվարկային արժեքում:

ԳԼՈՒԽ XVII. ՖՈՆԴԻ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

146. Ֆոնդի տեսակի փոփոխումը, միացումը և դադարեցումը կատարվում է Կառավարչի խորհրդի որոշման հիման վրա՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով հետևյալ հիմքերով.
- 1) օրենսդրությամբ սահմանված հիմքերով,
 - 2) «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 8.1-րդ հոդվածով նախատեսված կարգով ֆոնդում առկա բոլոր կենսաթոշակային խնայողությունները Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգ տեղափոխելու գործընթացն ավարտելու հիմքով:
147. Ֆոնդի միացման համար պահանջվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը: Կառավարչի կամ Պահառուի կողմից Ֆոնդը կարող է դադարեցվել միայն Օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում: Ֆոնդի դադարեցման գործընթացը կազմակերպում է Կառավարչի գործադիր մարմինը:
148. Ֆոնդի տեսակի փոփոխման, միացման և դադարեցման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Կառավարչի հաշվին:

ԳԼՈՒԽ XVIII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

149. Կառավարիչը կարող է այլ կառավարչի փոխանցել Ֆոնդի կառավարումը միայն Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագրի առկայության և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից Օրենսդրությամբ սահմանված կարգով տրված նախնական համաձայնության առկայության դեպքում: Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագիրն ուժի մեջ է մտնում այդ պայմանագրում նշված ժամկետում, բայց ոչ շուտ, քան ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնությունը տրամադրելու օրը:
150. Նախքան 149-րդ կետով նախատեսված նախնական համաձայնությունն ստանալը Կառավարիչը միջոցներ է ձեռնարկում Ֆոնդի կառավարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով այլ

կառավարչի փոխանցելու ուղղությամբ: Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագիրը կնքվում է ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետ:

ԳԼՈՒԽ XIX. ՊԱՀԱՌՈՒԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

151. Պահառուի փոփոխությունն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի համաձայն:
152. Ֆոնդի պահառության պայմանագիրը դադարելուց հետո Պահառուն պարտավոր է Ֆոնդի ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: Ֆոնդի պահառության պայմանագրի դադարեցման դեպքում Պահառուն պարտավոր է շարունակել կատարել Օրենսդրությամբ և սույն Կանոններով սահմանված իր պարտականությունները մինչև նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս Ֆոնդի ակտիվների փոխանցումը:

ԳԼՈՒԽ XX. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

153. Կառավարչի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ Կառավարչի ինտերնետային կայքից:
154. Կառավարչի կողմից տեղեկությունները հրապարակվում են սույն գլխով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, կենտրոնական դեպոզիտարիայի եվ դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» Կանոնակարգ 8/03-ով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:
155. Բացի այդ, Կառավարիչը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը հրապարակում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, փայի հաշվարկային արժեքը և մարման ու թողարկման գները, ինչպես նաև Ֆոնդի եկամտաբերության այլ ցուցանիշներ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային

ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, կենտրոնական դեպոզիտարիայի եվ դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» Կանոնակարգ 8/03-ի :

156. Կառավարիչը կարող է հրապարակել նաև Ֆոնդի վերաբերյալ այլ տեղեկություններ, որոնք ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված առևտրային կամ այլ գաղտնիք կամ ծառայողական տեղեկատվություն չեն համարվում:

ԳԼՈՒԽ XXI. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

157. Կանոնների փոփոխումն իրականացվում է սույն գլխով և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:
158. Կանոնները փոփոխվում են Կառավարչի տնօրենների խորհրդի որոշման հիման վրա:
159. Կանոնների փոփոխությունները ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո հրապարակվում են Կառավարչի ինտերնետային կայքում:
160. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո, եթե փոփոխություններում դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ սահմանված չէ: